Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մերգեյ Առաքելյան

26.06.2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Արփինե Հունանի Առաքելյանի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումը (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ԺԲ.00.02- հանրային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ընդհանուր բնութագրին, բնութագրիչ հատկանիշներին, Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթին:

Հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը և ազդեցության ձևերը, հեղինակի կողմից փորձ է արվել բացահայտել Եվրոպական դատարանի վճիռների ուղղակի, անուղղակի, իրազեկող, ակադեմիական, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների գործունեության նկատմամբ ունեցած ազդեցությունը: Քննարկման առարկա է դարձել Եվրոպական դատարանի վճիռների դերը Եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացման ապահովելու հարցում:

Հեղինակի կողմից քննարկվել և վեր է հանվել խորհրդարանական վերահսկողության և խորհրդարանական մշտադիտարկման շրջանակներում ՀՀ

Ազգային ժողովի իրավասության շրջանակը, ուսումնասիրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը դատարանների իրավակիրառ գործունեության նկատմամբ, անդրադարձ է կատարվել Սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների ամրապնդման համատեքստում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությանը:

Հեղինակը մշակել է գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում առաջին համալիր հետազոտությունը:

Վերոշարադրվածը, բնականաբար, վկայում է Ա. Առաքելյանի կողմից ընտրված թեմայի արդիականության և հրատապության մասին:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ, այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, դրանցում ներառված ինը ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը և մեթոդները, տեսական, նորմատիվ և էմպիրիկ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը:

Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների, իրավաբան-գիտնականների, տեսաբանների, միջազգային և ներպետական իրավական ակտերի, միջազգային կազմակերպությունների մարմինների կողմից կայացված ակտերի, միջազգային դատական մարմինների ինչպես նաև ազգային դատարանների կողմից կայացված դատական ակտերի վրա՝ հեղինակը իր աշխատանքում առաջ է քաշում և հաջորդաբար լուծումներ առաջարկում հետևյալ խնդիրներին՝

- պարզել Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը և դրանով պայմանավորված՝ տարանջատել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերը,
- բացահայտել Եվրոպական դատարանի դատազորության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափորոշիչների սահմանման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգի տարրերը, մեթոդները, ու սկզբունքները,
- վեր հանել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերից յուրաքանչյուրի առանձնահատուկ բովանդակային ծավալը,
- դիտարկել Եվրոպական դատարանի վճիռները միջազգային սահմանադրական արդարադատության համատեքստում և բացահայտել Եվրոպական դատարանի վճիռների արժեքը միջազգային սահմանադրական իրավունքի աղբյուների համակարգում:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները և հանգել հետևյալ հիմնական եզրակացություններին՝

- Եվրոպական դատարանի վճիռները Կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանություններն են, որոնք ունեն գիտագործնական և գիտատեսական

նշանակություն, բնութագրվում են հարաբերական կայունությամբ, ամբողջական կիրառմամբ և պարտադիր են կատարման համար,

- Եվրոպական դատարանն իր դատազորության ներքո գտնվող հարցերով կոնվենցիոն դրույթները մեկնաբանելիս բացահայտում է Կոնվենցիայում ամրագրված իրավական չափորոշիչների ծավալը՝ իրավակիրառ պրակտիկայում ձևավորելով նոր չափորոշիչներ,
- որպես կանոն՝ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումն իրականացվում է ex post կամ հետահայաց գնահատման տեսությանը համապատասխան,
- Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համար օգտագործվում են համեմատական-իրավական, իրավական մոդելավորման հատուկ մեթոդները և անալիզ, դեդուկցիա և ինդուկցիա համագիտական մեթոդները,
- ըստ հասցեական ազդեցության՝ Եվրոպական դատարանի վճիռների տարբերակման հիմքում ընկած է այն հանգամանքը, թե Եվրոպական դատարանի վճռի պատճառաբանական մասում արված դիտարկումներն ու մեկնաբանություններն ինչպիսի ազդեցության և պարտադիրության ուժ են ունենում պետության համար,
- Եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացումը ոչ թե հանգում է որոշակի տարածաշրջանում ընդհանուր կիրառություն և մեկնաբանություն ունեցող իրավական ակտի ճանաչմանն ու կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձևավորմանը, որում իրացվում է եվրոպական իրավական համակարգի արժեքանությունը,
- խորհրդարանական վերահսկողության տեսանկունից գոյություն ունեցող կառուցակարգերը դեռևս կատարելագործման կարիք ունեն, ՀՀ ազգային ժողովի գործիքակազմն ու լիազորությունները խորհրդարանական մշտադիտարկման իրականացման առնչությամբ թերի են,

- ներպետական օրենսդրության, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական գնահատականների լույսի ներքո միանշանակ է, որ կոնկրետ գործով ներպետական վարույթի շրջանակում գործի կողմ հանդիսացող անձի կողմից Եվրոպական դատարանի քննությանը հանձնված գանգատի առնչությամբ կայացված վճիռն անառարկելիորեն կարող է դիտարկվել որպես նոր հանգամանք քննարկվող վարույթի վերանայման և գործի վերաքննության համար:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ և դիտողություններ, որոնք, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին.

1.Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե ատենախոսության հիմքում որպես տեսական և նորմատիվ բազա առավելապես դրվեին ոչ միայն միջազգային և ներպետական իրավական, միջազգային կազմակերպությունների կողմից կայացված ակտերը, միջազգային և ազգային դատարանների կողմից կայացված դատական ակտերը, այլ, ի թիվս պրակտիկ-իրավական բնույթ կրող նյութերի, համամասնորեն քննարկվեին նաև իրավաբան-գիտնականների, տեսաբանների, տվյալ ոլորտում գիտական աշխատություններ ունեցող անձանց կողմից ներկայացված կարծիքները, վերլուծությունները:

2. Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում հեղինակը մանրամասն անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթին: Հեղինակը ներկայացրել և վերլուծել է Եվրոպական դատարանի վճիռների բնութագրական հատկանիշները, դրանց բովանդակությունը կազմող բաղադրիչները, վերջիններիս վերաբերելի և պրակտիկ նշանակություն ունեցող դատական նախադեպերը:

Մինչդեռ, հարկ ենք համարում նկատել, որ վերոգրյալից զատ ցանկալի կլիներ անդրադարձ կատարել նաև պրակտիկ նշականություն ունեցող այն հարցադրմանը, թե ինչ իրավական հետևանքներով է հղի պետության կողմից

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների չկատարումը, դրանց շրջանցումը կամ չկիրառումը: Կարծում ենք, որ այս կոմպոնենտին անդրադառնալով՝ տվյալ ենթագլուխն էլ ամբողջական իրավավերլուծական և իրավակիրառ բնույթ կկրեր:

3. Աշխատանքի 2-րդ գլուխը հեղինակը նվիրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգին և մեթոդներին: Դրա շրջանակներում հեղինակի կողմից վեր են հանվել այն հանգամանքները, որոնք կարևոր դեր են կատարում ազդեցության գնահատումն իրականացելիս, վերլուծության է ենթարկվել գնահատման ազդեցությունն ըստ հասցեական բնույթի, ներկայացվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունն ըստ ներգրավված պետական մարմինների գործունեության ոլորտի և ենթադրվող լրացուցիչ արդյունքի:

Կարևորելով վերոգրյալ ոլորտների շրջանակում հեղինակի կատարած վերլուծությունն ու դիտարկումները, առաջ քաշած խնդիրները՝ կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե նշված գլխի շրջանակներում, ելնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման արդյունավետ և կիրառելի համակարգ ունենալու նկատառումներից, անդրադարձ կատարվեր նաև ՀՀ ներպետական իրավական համակարգին համապատասխանող մոդելի ներդրմանը:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել *կատարյալ տեսնելու ցանկությամբ:*

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի

պարբերականներում հեղինակի հրատարակած թվով 7 հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արփինե Հունանի Առաքելյանի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումը (Հայաստանի Հանրապետության օրինակով)» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.02 հանրային իրավունք մասնագիտությամբ:

Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար,
գիտական խորհրդի քարտուղար՝ **Ա.Գալստյան**